ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 02 » 11 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000101

Ձեռնարկողը՝ ***«ՀԳՇՆ» ՍՊԸ***
ք. Երևան, Կիևյան 16

Գործունեությունը՝ ***Հովտաշատ համայնքի միջնակարգ դպրոցի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արարատի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000101

<02> 11 **2020թ.**

Արարատի մարզի Հովտաշատ համայնքի միջնակարգ դպրոցի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Ներածական մաս

Ձեռնարկող՝	«ՀԳՇՆ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ՀՀ Արարատի մարզի Հովտաշատ համայնք

Հովտաշատի միջնակարգ դպրոցի 2-րդ մասնաշենքի ամրացումն ու նոր մասնաշենքերի կառուցումն իրականացվելու է Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում (ԴՍԱԲԾ) Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) աջակցությամբ: Գործունեությունն իրականացվելու է Արարատի մարզի Հովտաշատ համայնքի Բաղրամյան 110 հասցեում:

Դպրոցի 7 նոր մասնաշենքերը (բացի ամրացման ենթակա 2-րդ մասնաշենքից) նախատեսվում է կառուցել առկա դպրոցի տարածքում՝ ապամոնտաժելով գոյություն ունեցող մասնաշենքերը՝ համաձայն տեխնիկական առաջադրանքի: Այն նախատեսված է 650 աշակերտների համար:

Նախատեսվող գործնեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի ա) ենթակետի հանդիսանում է Գ կատեգորիայի գործնեության տեսակ:

Նկարագրական մաս. Համաձայն նախնական գնահատման հայտի՝ նախատեսվող դպրոցը կառուցվելու է անշարժ գույքի սեփականության իրավունք ունեցող 2.14հա ընդհանուր մակերեսով հողամասում: Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնականը՝ հասարակական կառուցապատման:

Երկրորդ մասնաշենքից բացի, առկա մնացած շինության ամբողջ ծավալում նախատեսվում են քանդման և ապամոնտաժման աշխատանքներ: Նախկին դպրոցի տարածքում նոր կառուցվող դպրոցի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 3728.6մ^2 և բաղկացած է դպրոցի 7 մասնաշենքերից, որոնք իրարից անջատված կլինեն դեֆորմացիոն կարերով:

Դպրոցական համալիրի կոնստրուկտիվ սխեման ընտրվել է սեյսմակայուն շինարարության գործող նորմերի և կանոնների համաձայն: Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է սեյսմիկ 3-րդ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ Amax=0.4g և ունի 9 բալ սեյսմիկ ռիսկայնության աստիճան:

Կառուցապատվող դպրոցի հարակից տարածքներում չկան մակերևութային ջրային ռեսուրսներ: Գրունտային ջրերը գտնվում են 4.5-6.4մ խորը հորիզոններում:

02543163
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Գնահատման հայտի համաձայն՝ տեղանքի ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքների իրականացման համար:

Հաշվի են առնելով գոյություն գունեցող շուրջ 70 սոճու ծառերի կենսունակությունը, որոնց բարձրությունը կազմում է մոտ 3մ, նույնպես զգուշությամբ արմատներով կհանվեն և կվերատնկվեն կանաչ գոտում, քանի որ դրանք խանգարում են գոյություն ունեցող դպրոցի ապամոնտաժման և շինարարական աշխատանքների կազմակերպմանը:

Դպրոցի բակում առկա են ցայտաղբյուր և հուշարձան: Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում է իրականացնել ազդեցության ենթակա հուշարձանի և ցայտաղբյուրի ապամոնտաժում և ժամանակավոր պահպանում հրապարակի կազմակերպան պլանով նախատեսված վայրում: Հուշարձանը և ցայտաղբյուրը կվերատեղադրվեն տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացման փուլում նախագծով նախատեսված տեղում:

Պատերը նախատեսվում է իրականացնել 20սմ հաստությամբ միաձույլ ե/բ և խարամաբետոնե բլոկներից, որոնք կոշտ կապված են ե/բ շրջանակների հետ:

Մասնաշենք 1. Երկհարկանի մասնաշենք է, որտեղ տեղակայված են դասասենյակները, ուսուցչանոցը, միջանցքները և ռեկրեացիաները:

- Մասնաշենք 2. Հիմնանորոգվող/ամրացվող ուսումնական մասնաշենքն է 9.6x42.0 մ առանցքային չափերով, որտեղ նախատեսված են դասասենյակներ, միջանցքներ, գրադարանն՝ իր գրապահոցով և ռեկրեացիաներ:
- Մասնաշենք 3. Իրենից ներկայացնում է երկհարկանի մասնաշենք, որն ունի նախամուտք՝ իր սրահով: Այստեղ են տեղակայված ճաշարանային սրահնն իր խոհանոցով և օժանդակ սենյակներով, խոհանոցը, ադմինիստրատիվ աշխատասենյակները և աստիճանավանդակը՝ վերելակով:
- Մասնաշենք 4. Եռահարկանի մասնաշենք է, որտեղ ձևավորում են ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության դասասենյակներն իրենց լաբորատորիաներով, առանձին դասասենյակները, ռեկրեացիաները՝ համապատասխան պատշգամբներով:
- Մասնաշենք 5. Եռահարկ շինություն է, որտեղ գտնվում են արհեստանոցը, տնարարության դասասենյակը, ուսուցչանոցը, միջանցքներն ու աստճանավանդակը:
- Մասնաշենք 6. Երկհարկանի մասնաշենք է, որտեղ տեղակայված է հանդիսությունների դահլիճն իր հանդերձարաններով ու սրահով:
- Մասնաշենք 7. Մեկհարկանի շինություն է, որտեղ տեղակայված է սպորտային դահլիճը և կից հանդերձարանը, ցնցուղարանները, սանհանգույցները, սպորտային սարքավորումներով հագեցած սենյակը:

Նախագծային լուծումներում հատուկ ուշադրություն է դարձվել մի շարք կարևոր հարցերին: Դպրոցական համալիրը ապահովված կլինի վերելակով, հատուկ զուգարաններով և թեքահարթակներով, որոնք նախատեսված են հենաշարժային խախտում/հաշմանդամություն ունեցող աշակերտներին սպասարկելու համար:

Դպրոցը ապահովված կլինի հակահրդեհային սարքավորումներով և հիդրանտով ինչպես նաև էվակուացիոն ելքերով:

Մասնաշենքերի ջեռուցումը կատարվելու է 32,7մ^2 մակերեսով կաթսայատնից, որտեղ տեղադրվելու է ավտոմատ կառավարման այրիչներով համալրված 2 կաթսա:

Նախատեսվում է կիրառել 20 բազմաբյուրեղ արևային վահանակներ: Տաք ջրամատակարարում ապահովելու նպատակով կտեղադրվեն նաև 8մ^2 մակերեսով արևային ջերմամեկուսացված կոլեկտորներ: Ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվում են գործող շինարարական նորմերի, կանոնների և տեխնիկական պայմանների համաձայն:

Դպրոցի գազամատարարարումն ու էլեկտրամատակարարումը նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող տեխնիկական պայմանների համաձայն: Իսկ ջրամատակարարումը իրականացվելու է համայնքի հետ կնքված պայմանագրի համաձայն: Շինարարական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ մեքենաներն ու մեխանիզմներն են՝ ավտոինքնաթափ, կցորդիչ-սալատեղափոխիչներ, ավտոամբարձիչ, ավտոբետոնախառնիչ, բուլդոզեր, էքսկավատոր և այլն:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական ձեռնարկություններից:

Շինարարության նորմատիվ ժամկետը նախատեսվում է 2 տարի և 9 ամիս (33 ամիս) և ևս 10.5 ամիս գոյություն ունեցող մասնաշենքի ամրացման և մյուս մասնաշենքերի ապամոնտաժման աշխատանքերի համար:

Շինարարական աշխատանքների ընթացքում հանվելու է 10476մ^3 ծավալով հողային զանգված, որի մի մասը՝ 6740մ^3-ը օգտագործվելու է հետլիցքի համար, հողաբուսաշերտը կազմելու է 260մ^3, իսկ մնացած 3476մ^3-ը տեղափոխվելու է քաղաքային աղբավայր:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ 3730մ^2 մակերեսով տարածքների ջրցանման (738,5մ^3), հողի(գրունտի) խոնավացման, անձնակազմի խմելու և կենցաղային կարիքների համար (2662,4մ^3):

Կառուցվող դպրոցի տարածքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները՝ հարակից տարածքի ուրբանացված լինելու պատճառով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կբարեկարգվի 576.2մ^2 ճանապարհ և 16692մ^2 մակերեսով կանաչ գոտի: Համաձայն կանաչապատման նախագծի տարածքում վերատնկվելու են հանվող 70 սոճու ծառեր: Դպրոցի տարածքի կանաչապատման աշխատանքների շրջանակում դպրոցի տարածքը կհամալրվի թվով 44 նոր արժեքավոր ծառատեսակներով, մասնավորապես՝ նախատեսվում է տնկել լորենի 24հատ, յունիպերուս 7հատ, սամշիտ 6հատ, սպիրեա օգոն 7հատ:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը կամ նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր.

- շինարար կապալառուն պարբերաբար կիրականացնի շինարարական հրապարակում մակերեսների ջրցանման և փոշենստեցման գործողություններ,
- շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ ու սահմանափակ արագությամբ (չի գերազանցի 30կմ/ժ արագությունը),
- փոշի առաջացնող նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) շինարարական հրապարակում կապահովեն պաստառներով ծածկված վիճակում,
- աշխատանքների ընթացքում պատշաճ մակարդակով կվերահսկվի նաև մեքենա-սարքավորումների տեխնիկական վիճակը,
- շին աշխատանքների ընթացքում օգտագործվող մեքենա-սարքավորումները կշահագործվեն բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում: Բացի այդ հիմնական աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն օրվա ցերեկային ժամերին, այն է՝ ժամը 14:00-ից 18:00,
- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում,
- շինարական աղբի կանանոնավոր հեռացում՝ թույլատրված աղբավայր, ինչպես

նաև հրապարակում կենցաղային թափոնների համար նախատեսված աղբամանների առկայություն,

- կիրականցվեն մեքենաների անիվների լվացման և մաքրման միջոցառումներ (կոպիճե մակերեսներ)՝ հրապարակից ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով,
- շինարարական նյութերի ձեռք բերումը կիրականացվի լիցենզավորված մատակարարներից, ներառյալ՝ բետոնաշաղախը համապատասխան հանգույցներից,
- վառելիքի և նավթամթերքների պահումը կիրականացվի ծածկված, ապահով և բնական ճանապարհով օդափոխվող տարածքում, որն ապահովված կլինի բետոնե, ավազե հիմքերի կամ մետաղական անթափանց տակդիրների վրա,
- մեքենա-սարքավորումների տեխնիկական սպասարկումը կիրականացվի մասնագիտացված կենտրոններում,
- ծրագրի ողջ ընթացքում բողոքների արձագանքման մեխանիզմի ներդրում,
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ,
- կապահովվեն աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումներ, ներառյալ՝ բանվորական կազմին կտրամադրվի սեզոնային արտահագուստ և անձնական պաշտպանիչ միջոցներ,
- կիրականացվեն դպրոցի տարածքում առկա հուշարձանների պահպանման միջոցառումներ,
- կիրականացվի ազդեցության ենթարկվող ծառերի վերատնկման միջոցառումներ:

Ծրագրի շրջանակում իրականացվող հիմնական բնապահպանական միջոցառումների գումարային ուղիղ արժեքը (առանց հարկերի) գնահատվում է 50 մլն. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է գոյություն ունեցող դպրոցի տարածքում: Գործունեության շինարարությունը և շահագործումն իրականացվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության փուլում, կրելու են ժամանակավոր բնույթ: Հայտով նախատեսված միջոցառումների կատարման արդյունքում կնվազեցվեն շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները: Հայտը լրամշակվել է նաև դիտողությունների և առաջարկությունների հիման վրա: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են Քաղաքաշինության կոմիտեն, առողջապահության նախարարությունը, պաշտպանության նախարարությունը, արտակարգ իրավիճակների նախարարությունը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Հովտաշատ համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել բնապահպանական և

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՍՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

շինարարական նորմերի պահպանմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:

2. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների բեռնվածությունը:

3. Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

4. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերն ու կանոնները՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարաի 2017թ. մարտի 28-ի թիվ 12-Ն հրամանի պահանջների:

5. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում:

6. Էլեկտրահաղորդիչ գծերի, խմելու ջրի խողովակաշարի կամ այլ չնախատեսված կոմունիկացիաների հետ հատման հատվածներում շինարարական աշխատանքներն իրականացնել համապատասխան մարմինների թույլատվությամբ:

7. Անհրաժեշտ է ապահովել հայտով ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:

8. Էլեկտրահաղորդիչ գծերի, խմելու ջրի խողովակաշարի կամ այլ կոմունիկացիաների հետ հատման հատվածներում շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համապատասխան մարմինների ներկայացուցիչների ներկայությամբ և թույլատվությամբ:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՀԳՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Հովտաշատ համայնքի միջնակարգ դպրոցի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Առաջին կարգի մասնագետ՝ Վ. Ռաիսյան